ՖՐԱՆՍԻԱՑԻ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սույն թվականի օգոստոսի 27-ին, ուրբաթ օրը, Մայր Աթոռ այցելեցին մի խումբ ֆրանսիացի ուխտավորներ՝ գլխավորությամբ Քրիստոնյաների միության համար գործող ազգային եպիսկոպոսական քարտուղարության պատասխանատու հայր Ռընե Ժիրոյի:

Խումբը, որին մաս էին կազմում նաև Պուատիեի համալսարանի պրոֆեսոր Միշել Եվդոկիմովը և կաթոլիկ Եկեղեցու մայրապետ քույր Մարի Կլեր Տրոշերը, բաղկացած էր գլխավորապես Մարսելի կաթոլիկ և ավետարանական համայնքների ներկայացուցիչներից:

Առավոտյան ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունեց ֆրանսիացի այցելուներին և բարի գալուստ մաղթեց նրանց: Խմբի ղեկավար հայր Ժիրոն ողջույնի ջերմ խոսք ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ուխտավորների անունից շնորհակալություն հայտնեց Նրան ընդունելության համար՝ նշելով միաժամանակ, որ դեպի Հայաստան և դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին սույն էկումենիկ ուղևորության նպատակն է ծանոթանալ Արևելքի հնագույն Եկեղեցիներից մեկի այսօրվա կյանքին և հաղորդակցվել նրա հարուստ պատմական ավանդությանը:

Իր պատասխան խոսքի մեջ Ամենայն Հայոց Հայրապետը ջերմորեն ողջունեց ֆրանսիացի ուխտավորների գալուստը Հայ Եկեղեցու կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ապա պատմական ամփոփ տեղեկություններ տվեց նրանց Հայ Եկեղեցու դժվարին, բայց փառավոր անցյալի, նրա այսօրվա կյանքի, քույր Եկեղեցիների հետ նրա ունեցած բարեկամական սերտ կապերի մասին՝ նշելով, որ Հայ Եկեղեցին անշեղորեն շարունակում է կատարել իր քրիստոնեական առաքելությունը հայ ժողովրդի կյանքի այսօրվա պայմաններում, թե՛ Սփյուռքում և թե՛ Մայր Հայրենիքում, ուր երեք միլիոն հայեր, հայրենի պետության հովանավորության ներքո, ապրում են խաղաղ, ապահով ու երջանիկ՝ ազատորեն բավարարելով իրենց հոգևոր բոլոր կարիքները:

Այնուհետև Նորին Սրբության և ֆրանսիացի հավատացյալների միջև տեղի ունեցավ վրույց եղբայրական սրտագին մթնոլորտում:

Ընդունելությանը ներկա էին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպիսկոպոս Պոլատյանը, Տ. Ստեփանոս վարդապետ Չաքալյանը, Տ. Զատիկ աբեղա Ավետիքյանը և Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար պրն. Պարգև Շահբազյանը:

Ընդունելության ավարտին Վեհափառ Հայրապետը հուշանվերներ բաժանեց խմբի անդամներին, բարեհաջող ուղևորություն մաղթեց նրանց և տվեց Իր հայրական օրհնությունները:

Մայր Աթոռ Ս. Էջմիածին իրենց այցելության առթիվ ֆրանսիացի ուխտավորները Մայր տաճարում աղոթեցին Իշման Սուրբ Սեղանի առաջ, ծանոթացան Մայր Աթոռի թանգարաններին, մայրավանքի շրջափակում գտնվող հուշարձաններին, այցելեցին Զվարթնոցի ավերակները, եղան Ս. Հռիփսիմե վանքում, ուր նրանց տրվեցին համապատասխան բացատրություններ:

Ֆրանսիացի ուխտավորները հրաժեշտ առան Հայոց Հայրապետից և Մայր Աթոռից ու մեկնեցին լավագույն տպավորություններով, հոգևոր ուրախությամբ և քրիստոնեական ապրումներով:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ՖՐԱՆՍԱՀԱՅ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐՈՎ ՎԵՀԱՐԱՆԻ ՇՔԱՄՈՒՏՔԻ ԱՌԱՋ